ԿԱՆԱԴԱՀԱՅ ԹԵՄԻ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Հայաստան

Վեհափառ Տեր, այսօր մայիսի 30 1986 Մոնրեալի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո հյուրընկալությամբ Կանադայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո թեմի երրորդ պատգամավորական ժողովի հարգարժան երեսփոխանները երկյուղածությամբ և հավատքով ունկնդրեցին Ձերդ Վեհափառության հայրական պատգամը: Անոնք՝ եկեղեցական, աշխարհական, և համայն կանադահայությունը խոնարհաբար կիոլեն Ձերդ Սուրբ Օծության իրենց որդիական սերն ու հարգանքը, կվերանորոգեն իրենց անխախտ հավատարմությունը սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնին և կխոստանան Ձեր հույսերն ու փափագները իրագործել ի փառս Աստուծո և ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցվո:

Ժողովը անցավ շատ խաղաղ և սիրալիր մթնոլորտի մեջ:

Հանուն պատգամավորական ժողովի,

հավատարմորեն՝

ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ
Առաջնորդ Կանադահայ թեմի